

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

- 40 Որ ի թվին Հայոց ՌՄԹ՝, յամսեան յու-
լիսի ԺԸ. դարթոյց Տէր Աստուած զոմն Ենկի
խոճայ Ամթեցի, (այս ինչ) ¹ անուն, որպէս ի
հինն՝ Զօրաբարէլ, զոր նա մեծաւ հողաբար-
ձութեամբ ջանաց եւ հող տարեալ զնաց ի
45 Հալապ վասն սուրբ Երուսաղէմայ պարտուց.
եւ անդ գտեալ անվանի խոճայս եւ վաճառա-
կանս. գրեց եւ այլ մայրաքաղաքն զալ հասա-
նել ի Հալապ, վասն խորհրդոյ քննել, թէ որ-
պէս կարիցեն ազատել ի պարտուց զԵրուսա-
50 ղէմ: Արդ նորոգողն ամենայնի Տէր Յիսուս նա
ինքն վերստին կանդնեաց եւ յորդորեաց եւ
գութ եւ սէր արկ ի սիրաս նոցա. որ բարի
կամօք եւ յօժար սրտիւ, բարեպաշտ եւ աս-
տուածասէր տանուտէրքն ելեալ աշխարհաց
55 եւ զաւուաց, վարդապետօք եւ քահանայիւք
միաբան, միակամ, միախորհ՝ եկեալ հասին
ի Հալապ քաղաքն եւ նստեալ անդ խորհուրդ
արարին իրեք ամիս եւ տեղակացան իմացեալ
զամենայն իրս եւ զբանս տարակուսանաց, որ
60 ԽՈՒ զուռուչ է: Այլ ճար եւ հնար չի գտան,

¹ Սիմէոն Ամթեցւոյն անուն համար դատարկ տեղ է ձգած: Հանդանակութեան մասնակցած են հե-
տեւեալ խոճաները. Ախիջան, Աւետ, Ղարիպան,
Միրզէ, Սիրաք, Փիլաք եւ Փօլաս վանեցիները, Առա-
քել, Աւետիք, Զաքարէ, Ոսկան, Մաֆար, Սուքիաս եւ
Փանոս ջուղայեցիները, Զխիջան Բաղիշեցի, Թումաջան
Ամզեցի, Բաղդասար Ուռհայեցի, Մազսուտ, Պետրոս
(Պէտիկ) եւ Վանտին Հալէպցիները եւ ուրիշներ. Սա-
ւայանեան, էջ 673. Ազանունի, Միաբանք, էջ 81:
«Ենկի խոճայ Ամթեցի» նոյն է հաւանորէն խոճայ Թու-
մաջանի հետ: